ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ապրիլի 1998 թվականի, №25
քաղ. Երևան

Էլեկտրաէներգիայի առք ու վաճառքի պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը որոշում է.

1. Հիմք ընդունելով, էներգետիկայի մասինե ՀՀ օրենքի №20 հոդվածը, հաստատել.

1.1 «Էլեկտրաէներգիայի առք ու վաճառքի մասին (բնակչության համար)» պայմանագրի օրինակելի ձևը (հավելված № 1):

1.2 «Էլեկտրաէներգիայի առք ու վաճառքի մասին (մինչև 1000 Վ այլ սպառողների և բարձր լարման սպառողների համար)» պայմանագրի օրինակելի ձևը (հավելված № 2):

2. Սահմանել, որ նշված պայմանագրի ձևաթղթերը բնակչությանն են տրվում էլեկտրաէներգիա մատակարարող ձեռնարկությունների կողմից՝ անվճար:
3. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող՝ էլեկտրաէներգիա մատակարարող ձեռնարկություններին և ընկերություններին՝ եռամսյա ժամկետում նշված օրինակելի ձևերով բոլոր սպառողների հետ կնքել համապատասխան պայմանագրեր:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի
նախագահ՝ **Վ.Մովսեսյան**